2010 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 503.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 529.8 մլրդ դրամ, որոնք ապահովել են կառավարության՝ ինն ամիսների համար հաստատած ծրագրի համապատասխանաբար 97.5 և 83.2 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 69.1%-ով, ծախսերի գծով՝ 61.8%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 21.2%-ով կամ 87.9 մլրդ դրամով: Ընդ որում, 19.7%-ով (76.6 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 96.9%-ով կամ 2.7 մլրդ դրամով՝ պաշտոնական դրամաշնորհները, 36%-ով կամ 8.5 մլրդ դրամով՝ այլ եկամուտները:

Պետական բյուջեի եկամուտների 92.5%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6.4%-ը՝ այլ եկամուտների, 1.1%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 12.3 մլրդ դրամ:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են 390.9 մլրդ դրամ և ապահովել իննամսյա ծրագրի 96.8%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 20.9%-ով կամ 67.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի աճով:

Հարկերի և տուրքերի 50.3%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է ավելի քան 196.5 մլրդ դրամ և 30.9%-ով կամ

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

46.4 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 125.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 71.1 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ մուտքերի աճ է արձանագրվել և՛ ՀՀ սահմանին հարկումից, և՛ ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով, ընդ որում, վերջիններիս աճի տեմպը գերազանցել է ներմուծումից ստացվող եկամուտների աճի տեմպին:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 30.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 21.3 մլրդ դրամ, որից 9.6 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 8.4 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 9.2 մլրդ դրամ, որից 4.6 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 13.8%-ով կամ 3.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված ակցիզային հարկի մուտքերի 18.1%-ով ավելացմամբ:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 13.7%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 53.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 5.9%-ով կամ 3.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ տնտեսավարողները 2010 թվականի շահութահարկի կանխավճարները վճարել են՝ հիմք ընդունելով 2009 թվականի շահութահարկի ցուցանիշները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 47.9 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 27.8%-ով կամ 10.4 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 20.2 մլրդ դրամ՝ 29.3%-ով կամ 4.6 մլրդ դրամով գերազանցելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում բյուջե են մուտքագրվել շուրջ 12.9 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով իննամսյա ծրագրի 86.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 7%-ով կամ 840.1 մլն դրամով:

Գործունեության առանձին տեսակներից հունվար-օգոստոս ամիսների ընթացքում գանձվել են շուրջ 15 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.8%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 3.7%-ով կամ 570.1 մլն դրամով: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալի անկում է արձանագրվել առևտրի իրականացման վայր կազմակերպելու, առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու և ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարների գծով:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 6 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 82.8%-ով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման, ինչպես նաև ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 8.5 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես՝ ավելի քան 3.2 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 2.1 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 170.3 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 796.8 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 13.8 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 13.5 մլն դրամ՝ ՀՀ հարկային

մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները և 924.7 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 46.7%-ով կամ 2.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի գծով մուտքերի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 74.6 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 97.9%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 14%-ով կամ 9.1 մլրդ դրամով:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 32.3 մլրդ դրամ և արդեն 8.2%-ով գերազանցել իննամսյա ծրագրային ցուցանիշը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 36%-ով կամ 8.5 մլրդ դրամով: Նման բարձր ցուցանիշներն ապահովվել են հիմնականում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների հաշվին, որոնք կազմել են շուրջ 10.2 մլրդ դրամ և համապատասխանաբար 71.4%-ով (4.2 մլրդ դրամով) և 159.5%-ով (6.2 մլրդ դրամով) գերազանցել իննամսյա ծրագրային և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշները: Նախորդ տարվա հունվար-օգոստոս ամիսների համեմատ 4.7 անգամ կամ շուրջ 3 մլրդ դրամով աճ է արձանագրվել ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների գծով: Ավելի քան 9.5 մլրդ դրամ են կազմել պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ստացվել են ավելի քան 5.5 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով իննամսյա ծրագրով նախատեսվածի 89.7%-ը: Մասնավորապես՝ 3.4 մլրդ դրամ է ստացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների

ֆինանսավորման նպատակով, 285.6 մլն դրամ՝ «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 1.8 մլրդ դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար, որոնց իննամսյա ծրագրի կատարողականը կազմել է 58.5%:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են ավելի քան 529.8 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով իննամսյա ծրագրի 83.2%-ը: Մասնավորապես՝ 478 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 51.8 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 8.8 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 7.1%-ով կամ շուրջ 35.3 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման ծախսերի և դրամաշնորհների գծով ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 478 մլրդ դրամ՝ 84.5%-ով կատարելով իննամսյա ծրագիրը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 7.7%-ով կամ 34.2 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 45 մլրդ դրամ ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 3.2 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են իննամսյա ծրագրի համապատասխանաբար 84.8%-ը և 82.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատավարձի ծախսերն աճել են 6.1%-ով, իսկ սոցիալական ապահովության վճարները՝ 3.8%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 96.8 մլրդ դրամ, որի իննամսյա ծրագիրը կատարվել է 83.7%-ով, իսկ փաստացի ցուցանիշը՝ 4.9%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 19.7 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով իննամսյա ծրագրի 75.4%-ը: Մասնավորապես՝

նշված գումարից 11.8 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 7.9 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 125.2%-ով կամ 10.9 մլրդ դրամով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով: Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 11.7 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով իննամսյա ծրագրի 86.5%-ը և 4.1%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

58.2 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 57.2 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 936.1 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին, 116.8 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 21.6 մլրդ դրամի դոտացիաներ՝ 17.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դրամաշնորհների իննամսյա ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 86.8%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 19.7%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33.8%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 161.3 մլրդ դրամ և 88.9%-ով ապահովել իննամսյա ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 117.6 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 43.7 մլրդ դրամ՝ նպաստները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն էական փոփոխություն չեն կրել, իսկ նպաստներն ավելացել են 7.1%-ով:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում պետական բյուջեի միջոցներից 82.2 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 78.1%-ով ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը և 4.3%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 51.8 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 73.4%-ը: 52.5 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով

ծախսերը՝ 10.7%-ով զիջելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 693.7 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախորդ տարվա 8.1 մլրդ դրամի դիմաց:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 26.5 մլրդ դրամ պակասուրդով՝ իննամսյա ծրագրով նախատեսված 120.4 մլրդ դրամի և 2009 թվականի նույն ժամանակահատվածի 79 մլրդ դրամ փաստացի ցուցանիշի դիմաց: Պակասուրդի ֆինանսավորման համար ներքին աղբյուրներից ներգրավվել է շուրջ 33.0 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման ցուցանիշը կազմել է -6.5 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 11.5 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից զուտ մուտքերը: Մասնավորապես՝ 12.3 մլրդ դրամ է մուտքագրվել գանձապետական պարտատոմսերի թողարկումից՝ կազմելով իննամսյա ծրագրով նախատեսվածի 54.3%-ը: Մուրհակների մարման նպատակով իննամսյա ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 97.3%-ով՝ կազմելով 21.7 մլն դրամ: 772.8 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը: Հաշվետու ժամանակահատվածում ներքին ֆինանսական ակտիվների հաշվին պակասուրդի ֆինանսավորումը կազմել է շուրջ 21.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 20.4%-ը: Մասնավորապես՝ շուրջ 16.7 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից, որից 12.2 մլրդ դրամը վճարվել է «Հայռուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից: Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է 10.8 մլրդ դրամ: Հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 6 մլրդ դրամի վարկեր: Նշված գումարից 5 մլրդ դրամը հատկացվել է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի առաջին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով: 175 մլն դրամն ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում: Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկային միջոցներից 350 մլն դրամ է հատկացվել

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը: Ավելի քան 414.2 մլն դրամը տրամադրվել է «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓՄՁ-ին: 92.8 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով:

2010 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -6.5 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 100.5%-ը: Մասնավորապես՝ 18.9 մլրդ դրամ է կազմել փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորումը, -25.4 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները:

Հաշվետու ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են ավելի քան 25.3 մլրդ դրամի վարկային միջոցներ: Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է 6.4 մլրդ դրամ, որից 4.1 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 211.9 մլն դրամ՝ ԳԶՄՀ նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 1.1 մլրդ դրամ է տրամադրվել էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 667.6 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 25.2 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 285.7 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Անցած ժամանակահատվածում 23.5 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 93.6 մլն դրամի վճարում, որից 44.8 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորություն-ների կատարմանն ուղղվել է 733.5 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 1.3 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: